Հաստատում եմ
«Ռուս-հայկական համալսարան»
ՄԲԿԿԿ ռեկտոր

Է. Մ. Սանդոյան

05 հունիսի 2026թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք-քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ Եվա Գագիկի Սաղոյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված՝ «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Եվա Գագիկի Սաղոյանի կողմից պաշտպանության ներկայացվող ատենախոսությունը նվիրված է իրավագիտության մեջ բավականին հետաքրքիր և կարևոր նշանակություն ունեցող թեմայի՝ ՀՀ-ում զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորման հարցերին:

Հայաստանի Հանրապետության տնտեսության բնագավառում զբոսաշրջությունը հանդիսանում է գերակա և ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղ, որն ապահովում է ֆինանսական միջոցների ներհոսք, ազդում է հարակից ոլորտների զարգացման վրա, մարզային և գյուղական համայնքներում ստեղծում է տնտեսական ակտիվություն, ինչպես նաև կարևոր դեր է խաղում պատմամշակութային հուշարձանների պահպանման և աշխարհում Հայաստանի՝ որպես պատմամշակութային հարուստ ժառանգություն ունեցող երկրի դրական վարկանիշի բարձրացման գործում:

Զբոսաշրջության ոլորտի իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխի դրույթներով, ինչպես նաև առանձին օրենքով՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով:

«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան զբոսաշրջային փաթեթի և դրա առնչությամբ կնքվող պայմանագրի հետ կապված իրավահարաբերություններն են: Սակայն զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեությունը զբոսաշրջային փաթեթներից բացի ընդգրկում է նաև առանձին զբոսաշրջային ծառայությունների և տուրերի առաջարկներ, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է կնքել պայմանագրեր: Նշված պայմանագրային հարաբերությունները «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով չեն կարգավորվում, և դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի վերաբերյալ նորմերը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ վերջին տասնամյակում այս ինստիտուտի կատարելագործմանն ուղղված որոշ փոփոխություններ են կատարվել, որոնք իրավահարաբերությունների կարգավորման հետ կապված մի շարք հարցերում բավականին արդյունավետ լուծումներ են առաջարկում, սակայն դրանք զերծ չեն թերություններից, բացթողումներից և հակասություններից: Միաժամանակ տնտեսության հետագա զարգացումը զբոսաշրջության իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրության կատարելագործման անհրաժեշտություն է առաջացնում:

Այսպիսով, ողջունելի է ատենախոսի կողմից նման թեմայի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելը, քանի որ ՀՀ իրավունքի գիտության մեջ առաջին անգամ ատենախոսության մակարդակով իրականացվել է զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորման հետ կապված խնդիրների մանրամասն հետազոտություն և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել համակարգված և հիմնավոր վերլուծության ենթարկել զբոսաշրջային ծառայությունների մատուցման հետ կապված տեսական և պրակտիկ հարցերը, զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի բովանդակությունը, զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխման և լուծման կարգը, զբոսաշրջային

գործունեության սուբյեկտների պատասխանատվության առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանատվությունից ազատելու պայմանները: Ուսումնասիրության արդյունքում ատենախոսը կարողացել է հասնել իր առջև դրված վերը նշված նպատակներին:

Ատենախոսության ակնառու արժանիքներն են.

1. ատենախոսությունն ունի բավականին հարուստ տեսական հիմք: Ատենախոսն իր աշխատանքում հետազոտել է ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հեղինակների գիտական աշխատություններ և հոդվածներ, ինչպես նաև ՀՀ և այլ երկրների դատական պրակտիկայի նյութեր,

2. ուսումնասիրություններ կատարելիս հեղինակն անդրադարձել է «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր» և «զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիր» եզրույթներին վերաբերող մի շարք տեսական և գործնական հարցերի քննությանը,

3. ատենախոսը մանրամասն քննարկել է զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի բովանդակությունը և էական պայմանների շրջանակը,

4. հեղինակը, վերլուծելով զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխման ու լուծման հետ կապված տեսական և պրակտիկ խնդիրները, վեր է հանել մի շարք առանձնահատկություններ:

ՈՒշագրավ են հեղինակի կողմից արված առաջարկությունները, որոնք վերաբերում են ՀՀ օրենսդրության կատարելագործմանը:

Այսպես, տեղին է հեղինակի կողմից կատարված այն դիտողությունը, որ «թեև ԵՄ իրավունքը փաթեթային ճանապարհորդության պայմանագիրը կարգավորում է որպես հատուկ ինստիտուտ, դրա բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն իր բնույթով ծառայությունների մատուցման պայմանագիր է»: Համաձայն ենք հեղինակի նշված դիրքորոշման հետ, քանի որ այն բխում է ՀՀ քաղաքացիաիրավական կարգավորումներից և քննարկվող ինստիտուտի իրավական բնույթից:

Համակարծիք ենք հեղինակի այն առաջարկի հետ, որ պետք է կիրառել «ֆինանսական ապահովման մեխանիզմ», և ֆինանսական կամ ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող երաշխիքով զբոսաշրջային փաթեթի

արժեքի և սպառողի ռեպատրիացիայի ծախսերի հատուցում պահանջելու հիմքեր սահմանել՝

1) արտագնա զբոսաշրջային օպերատորի և իր անունից գործող արտագնա զբոսաշրջային գործակալի անվճարունակության հետևանքով պարտավորության կատարման անհնարինությունը.

2) անհաղթահարելի ուժի հետևանքով զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների մատուցման անհնարինության դեպքում զբոսաշրջային ծառայության(ների) արժեքն արտագնա զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից չվերադարձնելը:

ՈՒշադրության արժանի է հեղինակի կողմից «պայմանագրի լուծում» և «պայմանագրից հրաժարում» եզրույթների քննարկումը: Ատենախոսը տեղին է նկատում, որ չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (օրինակ՝ հոդված 538-րդ) և այլ օրենսդրական ակտերում (ՍԻՊ օրենք, հոդվածներ 26, 27) երբեմն «պայմանագրի լուծում» և «պայմանագրից հրաժարում» եզրույթներն օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն դրանք տարբեր իրավական կատեգորիաներ են՝ ինչպես իրենց կիրառման ընթացակարգով, այնպես էլ որոշ դեպքերում առաջացրած հետևանքներով, և, ըստ հեղինակի, պետք է տարբերվեն նաև կիրառման հիմքերով: Մասնավորապես՝ պայմանագրի միակողմանի լուծումը իրականացվում է դատական կարգով, իսկ օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում դրանից հրաժարվելը կարող է կատարվել առանց դատարան դիմելու:

Տեղին է ատենախոսի այն դիտարկումը, որ զբոսաշրջային գործակալները, անկախ զբոսաշրջային օպերատորների հետ կնքված պայմանագրի (հանձնարարության, կոմիսիայի, առավել հաճախ՝ գործակալության պայմանագրեր) տեսակից, պարտավորության խախտման դեպքում, հղում անելով իրենց գործունեության միջնորդային բնույթին, շատ հաճախ փորձում են խուսափել պատասխանատվությունից: Ուստի ատենախոսի կողմից առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել պարտավորության խախտման համար զբոսաշրջային օպերատորի և գործակալի համապարտ պատասխանատվության կանոնը:

Նույն սկզբունքով սպառողների շահերն առավելագույնս պաշտպանելու նպատակով հեղինակն առաջարկել է օտարերկրյա զբոսաշրջային օպերատորի ձևավորած զբոսաշրջային փաթեթների շրջանակներում տեղական զբոսաշրջային

գործակալի կողմից սպառողների ճանապարհորդությունները կազմակերպելու դեպքում ևս նախատեսել նշված սուբյեկտների համապարտ պատասխանատվություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը օտարերկրյա տարրի մասնակցությամբ առաջացող իրենց պայմանագրային հարաբերությունների նկատմամբ սահմանել են կիրառելի այլ իրավունք, և այն պատասխանատվության սուբյեկտի վերաբերյալ նախատեսում է այլ կանոն:

Չթերագնահատելով կատարված հետազոտության գիտական արժեքը, այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ կարելի է որոշ դիտողություններ անել: Մասնավորապես՝

1. Ատենախոսության 1-ին գլխի 1.2 պարագրաֆի եզրափակիչ մասում արված «Զբոսաշրջության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելու առաջարկի կապակցությամբ՝ կարծում ենք, որ «զբոսաշրջային պայմանագիր» հասկացությունը պետք է որպես առանձին կետ ներառել օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝ օրենքում պահպանելով «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր» հասկացությունը (2015 թվականի նոյեմբերի 25-ի ԵՄ դիրեկտիվում առկա է «զբոսաշրջային փաթեթ» բնորոշումը):

2. Ատենախոսության 2-րդ գլխի 2.1. պարագրաֆում հեղինակը մանրամասն վերլուծել է զբոսաշրջիկի՝ որպես պայմանագրի կողմի իրավական կարգավիճակը, սակայն գտնում ենք, որ բավարար չափով չի անդրադարձել պատվիրատուի կողմից հօգուտ երրորդ անձի կնքված պայմանագրի առանձնահատկություններին: Ցանկալի կլիներ նշված պարագրաֆում հեղինակի կողմից ավելի մանրամասն ներկայացվեր զբոսաշրջային ծառայությունից օգտվող երրորդ անձանց իրավունքներն և պարտականությունները:

3. Ատենախոսության 3-րդ գլխի 3.3. պարագրաֆը վերնագրված է «Զբոսաշրջային փաթեթում ներառված փոխադրման համար պատասխանատվության առանձնահատկությունները՝ օդային փոխադրումների օրինակով», և նշված պարագրաֆում հեղինակի կողմից բացառապես ներկայացվել են զբոսաշրջային փաթեթների շրջանակներում ավիափոխադրումների իրականացման հետ կապված իրավահարաբերությունները: Մինչդեռ կարծում ենք՝ նշված պարագրաֆում հեղինակը պետք է ուսումնասիրեր նաև զբոսաշրջային փաթեթում ներառված բոլոր փոխադրումների (ավտոմոբիլային, երկաթուղային,

օդային, ջրային, վերգետնյա էլեկտրական, մետրոպոլիտենի) համար պատասխանատվության առանձնահատկությունները:

4. Հեղինակն առաջարկել է զբոսաշրջային պայմանագրի պայմանները դասակարգել երկու խմբում. կողմերի միջև համաձայնեցման ենթակա էական պայմաններ, և պայմանագրում ներառվող, սակայն կողմերի միջև համաձայնեցում չենթադրող տեղեկատվական բնույթի պարտադիր պայմաններ: Գտնում ենք, որ նման դասակարգումը թեկուզև գործնականում նշանակություն ունի, սակայն տեսականորեն բավարար չափով հիմնավորված չէ:

Այնուամենայնիվ, նշված դիտողություններն ու առաջարկությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Եվա Գագիկի Սաղոյանի «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ ատենախոսը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն և ներկայացրել է գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրված և գործնական նշանակություն ունեցող աշխատանք:

«Ռուս-հայկական համալսարան» ՄԲԿԿԿ
Իրավունքի ինստիտուտի քաղաքացիական իրավունքի
և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ ---------- Կ. Հ. Սարդարյան

կատ.՝ ի.գ.թ. Լ. Ժ. Տոնոյան